# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**16 մարտի 2022 թվականի N 96-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 95-րդ և 96-րդ հոդվածների և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի նոյեմբերի 26-ի N 67-Լ հրամանը և 2021 թվականի նոյեմբերի 29-ի N ԳՍ/20.1/30867-2021 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել *2022 թվականի երկրորդ եռամսյակում* Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն՝ հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 09-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 03-Ն հրամանով հաստատված իրավական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց *(համաձայնությամբ)*:

5. Յուրաքանչյուր համայնքում իրավական և մասնագիտական հսկողությունն ավարտելուց հետո, մեկամսյա ժամկետում հսկողության արձանագրությունը և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

**2022 թվականի մարտի 16**
**ք. Հրազդան**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի
2022 թվականի մարտի 16-ի N 96-Ա որոշման

**2022 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

| h/h | Համայնքի անվանումը | ժամանակահատվածը | Հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|
| | | | Զբաղեցրած պաշտոնը (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Ազգանունը, անունը |
| 1 | 2 | 3 | 5 | 6 |
| 1 | Զրվեժ | ապրիլ 2019-ապրիլ 2022 | ղեկավար՝<br>ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ<br>անդամներ՝<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի ավագ մասնագետ<br>- ՀՀ Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ավագ մասնագետ | *Ալեքսանյան Հարություն*<br>*Թումոյան Ռոբերտ*<br>*Հակոբյան Արմեն*<br>*Բաղդասարյան Սեդա*<br>*Վարդանյան Արմեն*<br>*Ավետիսյան Գուրգեն*<br>*Հակոբյան Հայկ*<br>*Թումոյան Կամո*<br>*Հակոբյան Արթուր*<br>*Արտաշյան Շավարշ* |
| 2 | Եղվարդ | Նոյեմբեր 2018-մայիս-հունիս 2022 | | |